Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230 - Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

1. Անահիտ Ավանեսյան - պատվիրակության ղեկավար
2. Լենա Նանուշյան
3. Ավագ Ավանեսյան
4. Ռաֆայել Գևորգյան
5. Արմենակ Խաչատրյան
6. Գարուշ Այվազյան
7. Սամվել Խարազյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

1. ՀՀ առողջապահության նախարար
2. ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
3. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
4. ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
5. ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ
6. ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետի պարտականությունները կատարող
7. Առողջապահության տնտեսագետների ասոցիացիայի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Լիտվայի Հանրապետություն, Վիլնյուս, 2022 թ. մայիսի 31-հունիսի 3

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն՝ Լիտվայի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համատեղ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակը Լիտվայի Հանրապետության առողջապահական համակարգի, մասնավորապես՝ առողջության ապահովագրության փորձն ուսումնասիրելու նպատակով կազմակերպված ուսումնական այցն էր:

6. Քննարկված թեմաները.

Քննարկվել են Լիտվայի Հանրապետությունում առողջության ապահովագրության ոլորտում ձեռքբերումները, համակարգի ներդրման և գործարկման մեխանիզմները և ոլորտային այլ մանրամասներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում Լիտվայի առողջապահության նախարար Արունաս Դուլկիսի հետ:

Քննարկվել են երկու երկրների առողջապահության նախարարությունների միջև ստորագրված՝ առողջապահության և բժշկագիտության բնագավառներում համագործակցության համաձայնագրից բխող անելիքները, մասնավորապես՝ ապահովագրության ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Կողմերն անդրադարձել են ապահովագրական ֆոնդի գումարների հավաքագրման մեխանիզմներին, ապահովագրության շրջանակներում դեղորայքի ծախսին վերաբերող հարցերին, ինչպես նաև երկու երկրների հետագա գործակցության ուղղություններին:

Կայացել է նաև հանդիպում Լիտվայի Առողջության ապահովագրության ազգային հիմնադրամի տնօրենի և աշխատակազմի հետ:

Զրույցի ընթացքում հիմնադրամի ղեկավարը ներկայացրել է իրենց աշխատանքները, գործող ծառայությունների փաթեթը, ինչպես նաև գնումների իրականացման մեխանիզմը և մոնիթորինգի ծրագիրը:

Իրականացել է հանդիպում Կաունասի առողջության ապահովագրության տարածքային հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հիմնադրամի գործառույթները, խնդիրները, իրականացվող աշխատանքներն ու վերահսկման մեխանիզմները:

Պատվիրակության անդամներն այցելել են նաև առողջության առաջնային պահպանման հաստատություն և Վիլնյուսի համալսարանական հիվանդանոց, ծանոթացել վերջիններիս կազմակերպական կառուցվածքին, իրականացված բարեփոխումներին, աշխատանքների ընթացքին, ապահովագրական համակարգի գործունեության մեխանիզմներին, որակի, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգերին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Լիտվայի առողջապահության նախարար Արունաս Դուլկիսի հետ հանդիպման ընթացքում հյուրընկալող կողմը ներկայացրել է Լիտվայում իրականացված բարեփոխումները, դրանց արդյունքները: Ընդգծվել է, որ շարունակում են աշխատել ծրագրերի արդյունավետության բարձրացման, հատկապես երկարաժամկետ ծրագրեր ներդնելու, բուժօգնության որակը բարելավելու ուղղությամբ:

Հանդիպման վերջում Անահիտ Ավանեսյանը գործընկերջը հրավիրել է Հայաստան՝ մասնակցելու Երևանում հոկտեմբերի 5-7-ն անցկացվելիք Արագ արձագանքման բժշկական թիմերի 5-րդ գլոբալ հանդիպմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու, ինչպես նաև փորձի փոխանակման համար կողմերը պատրաստակամություն են հայտնել պարբերաբար իրականացնել առցանց աշխատանքային քննարկումներ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

03 հունիսի, 2022թ.